Ծիրակի մարզ

Հայկ Ղուկասյան , Դանիել Սարգսյան

Շիրակի մարզ

Տարածքը՝ 2681 քառ. կմ
Բնակչության թվաքանակը (01.01,2023թ)300,3 հազ. մարդ
Մարզկենտրոնը՝ Գյումրի քաղաք:
Քաղաքները՝ Արթիկ, Մարալիկ:
Գյուղական համայնքների թիվը՝ 116:

Աշխարհագրական դիրքը

Շիրակի մարզը գտնվում է մեր հանրապետության հյուսիս¬արևմտյան վերջույթում: Պետական սահմանների երկայնքով հյուսիսից սահմանակից է Վրաստանին, արևմուտքից՝ Թուրքիային: Արևելքից սահմանակից է Լոռու մարզին, իսկ հարավից՝ Արագածոտնի մարզին :
Հարևան մարզերի և մայրաքաղաքի հետ կապվում է հանրապետական նշանակության Երևան¬Աշտարակ¬Թալին¬Գյումրի, Երևան¬Արմավիր¬Քարակերտ¬Գյումրի ավտոխճուղիներով, ինչպես նաև Գյումրի¬Վանաձոր ավտոմայրուղով և գլխավոր երկաթուղով, որից ճյուղավորվում են Գյումրի¬Արթիկ¬Պեմզաշեն և Գյումրի¬Կարս (Թուրքիա) երկաթգծերը: Չնայած եզրային տեղադիրքին, Շիրակի մարզն ունի հարմար տրանսպորտա¬աշխարհագրական դիրք, ներքին հաղորդակցության բարեկարգ ճանապարհների խիտ ցանց, որոնց մի հատվածն ունի ստրատեգիական նշանակություն:

Բնական պայմանները

- Մարզի տարածքին բնորոշ է բացարձակ բարձրությունների մեծ տարբերությունը (1400 մ¬ից 4090 մ սահմաններում), մակերևույթի թույլ մասնատվածությունը, ռելիեֆի հրաբխային ձևերի բազմազանությունը և տարածվածությունը, հնագույն սառցապատման հետքերի պահպանվածությունը: Ամբողջությամբ ընդգրկված է Ծիրակի ֆիզիկաաշխարհագրական շրջանի կազմում: Ծայր հյուսիս¬արևմուտքում Եղնախաղի, իսկ հյուսիս¬արևելյան եզրում Ջավախքի հրաբխային լեռնավահաններն են, որոնց միջև տարածվում է Աշոցքի բարձրադիր սարահարթը: Այստեղ է գտնվում Արփի լճի ջրամբարը, որից սկիզբ է առնում մեր հանրապետության ամենաերկար գետը՝ Ախուրյանը (հիշե՛ք Ախուրյան գետի երկարությունը և ակունքի բացարձակ բարձրությունը): Աշոցքի սարահարթից հարավ, Ախուրյանի հովտի երկայնքով և հյուսիսից դեպի հարավ աստիճանաբար լայնացող ուրվագծով տարածվում է Ծիրակի դաշտը՝ Արարատյան դաշտից հետո մեր հանրապետության, մակերեսի մեծությամբ, երկրորդ սարահարթը: Վերջինիս արևելյան սահմանների ուղղությամբ դասավորված են Ծիրակի ծալքաբեկորավոր լեռնաշղթայի, Ծարայի հրաբխային կոնի (2475 մ) և Արագածի լեռնավահանի հյուսիս¬արևմտյան կողմնադրության լեռնալանջերը :

Ջրագրական ցանց

- Գլխավոր **գետային զարկերակը՝** Ախուրյանը, հոսում է լայն և խոր կիրճով, ընդունում է բազմաթիվ վտակներ (Մանթաշ, Գյումրիգետ, Ջաջուռ), որոնք ամռանը չորանում են: Ախուրյանը հայտնի է Թուրքիայի հետ համատեղ շահագործվող նույնանուն ջրամբարով: Ախուրյանից են սնվում Ծիրակի և Թալինի ջրանցքները: Գործում են նաև Կառնուտի, Մանթաշի, Սառնաղբյուրի, Հոռոմի ջրամբարները:

Բնակչությունը

Շիրակի մարզի բնակչության թվաքանակը և ազգային կազմը վերջին քսան տարում էապես փոփոխվել են՝ պայմանավորված 1988 թ.-ի երկրաշարժի հասցրած զոհերով ու ավերածություններով, ադրբեջանցիների արտագաղթով, տեղի հայ ազգաբնակչության զբաղվածության հիմնախնդրով: Քաղաքային բնակավայրերը երեքն են. Գյումրի (202 հազ. բնակիչ, Երևանից հեռու է 127 կմ), Արթիկ (15 հազ. բնակիչ, 105 կմ), Մարալիկ (6 հազ. բնակիչ, 95 կմ): Բնակչության ուրբանիզացման մակարդակը 73% է, միջին տարեկան բնական աճը՝ 0,26%: Կանայք ավելի շատ են (51,7%), քան տղամարդիկ (48,3%): Շիրակի մարզում հաշվում են 128 գյուղեր:



ՔԱՂԱՔՆԵՐ

TOWNS/CITIES

Անվանումը	Town name	Մշտական բնակչության թվաքանակը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ[1] Number of dejure population as of January 1, 2022, person[1]
Գյումրի	Gyumri	111 138
Արթիկ	Artik	17 601
Մարալիկ	Maralik	5 335

Տնտեսությունը

Խորհրդային իշխանության տարիներին, Շիրակի մարզի ներկայիս սահմաններում տեղաբաշխված արդյունաբերական ձեռնարկություններն ապահովում էին մեր հանրապետության արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալի շուրջ 12%¬ը, իսկ այժմ՝ ընդամենը 2%¬ը: Տնտեսության առաջատար համալիրը գյուղատնտեսությունն է, որին բաժին է ընկնում մարզի համախառն արտադրանքի 80%¬ը: Առաջատար ճյուղը բուսաբուծությունն է: Զբաղվում են հացահատիկային տնտեսությամբ, ճակնդեղի, կարտոֆիլի, կաղամբի և գազարի մշակությամբ: Բուծում են կաթնամսատու խոշոր եղջերավոր անասուններ, կոպտաբուրդ ոչխար, խոզ, թռչուն: Գյուղատնտեսական հողահանդակները (230 հազ. հա) կազմում են Շիրակի մարզի ընդհանուր մակերեսի 86%¬ը: Արդյունաբերական համալիրին բնորոշ են շինանյութերի (տուֆ, պեմզա) արդյունահանումը, սարքաշինական, ապակյա տարաների, մանածագործական, կաթնամթերքների, խմիչքների արտադրությունները: Նախատեսվում է մասնակիորեն վերականգնել Շիրակի մարզի տեքստիլ արդյունաբերության նախկին ձեռնարկությունների մի մասի համբավն ու հզորությունը:

Շիրակի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռը՝ ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում, 2020

Աղբյուրը՝armstat

Պատմամշակութային հուշարձանները

Շիրակի մարզի ուշագրավ պատմաճարտարապետական հուշարձաններից են. Վահրամաբերդի ուրարտական ամրոցը (Ք.ա. I հազարամյակ), Կառնուտի եկեղեցին (IV-V դդ.), Երերուքի տաճարը (V դ.), Սառնաղբյուրի վանքը (V-VII դդ.), Ջրառատի եկեղեցին (VII դ.), Հառիճավանքը (VII-XIII դդ.), Մարմաշենի վանքը (X-XIII դդ.) և այլն:

Շիրակի մարզի հիմնախնդիրները

Շիրակի մարզի կարովոր հիմնախնդիրներց է , ճանապհարները որոնք խնդիրներ են առաջացնում ցամաքային տրանսպորտի համար ,